ԵՐԻՏԱՍԱՐԴ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ XXXVIII ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

2017 թ. հուլիսի 8–9-ը ՀՀ ԳԱԱ Արզականի գիտաժողովների տանը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների հերթական՝ XXXVIII *գիտական նստաշրջանը: Գիտաժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ Պատմության ինստիտուտից (ՊԻ), Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնից (ՇՀՀԿ), ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնից (ԳԿՄԿ), Մաշտոցի անվան Մատենադարանից (ՄՄ), Հայաստանի ազգային արխիվից (ՀԱԱ), Հայաստանի ազգային գրադարանից (ՀԱԳ), Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանից (ՀՊՄՀ), Մոսկվայի պետական համալսարանից (ՄՊՀ):*

Գիտական նստաշրջանի բացումը տեղի ունեցավ հուլիսի 8-ին: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը*: Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս* Յուրի Սուվարյանը*, ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. դ.* Կարեն Խաչատրյանը*:*

Երկօրյա գիտաժողովի չորս նիստերի (նիստավարներ՝ պ. գ. թ. Հակոբ Մուրադյան, Մարիամ Գրիգորյան, Արմեն Մարուքյան, Համո Սուքիասյան*) ընթացքում հնչեցին երկու տասնյակից ավել զեկուցումներ ու հաղորդումներ: Զեկուցումները վերաբերում էին՝ Սալմանասար III-ի գահակալության շրջանում Աղձնիքի ռազմաքաղաքական իրավիճակին (*Հարություն Խուդանյան*, ՊԻ), վաղմիջնադարյան հայկական սրբախոսական գրականության մեջ Սրբության հարացույցի քննությանը (*Շավարշ Ազատյան*, ՊԻ), Գրիգոր Բ Վկայասերի աթոռակալության շրջանում Հայոց կաթողիկոսական իշխանությանը (*Վահե Թորոսյան*, ՄՄ, ՊԻ), Տայքում քաղկեդոնականության տարածման խնդրին (*Լիանա Նազարյան*, ՊԻ), XIII դարում հայ իշխանուհիների նվիրատվական գործունեությանը (*Մարիամ Գրիգորյան*, ՊԻ), XIX դարում և XX դարի առաջին տասնամյակում Հայ Առաքելական Եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի ծխական համայնքների կառավարմանը (*Վարդիթեր Գրիգորյան*, ՀԱԱ, ՊԻ), խմբագիր ու հրատարակիչ Կարապետ Փանոսյանի կյանքին ու գործունեությանը (*Գայանե Նալբանդյան*, ՊԻ), «Հայելի» երգիծական ամսագրին (1883–1902 թթ.) (*Գևորգ Այվազյան*, ՇՀՀԿ), 1889–1899 թթ. Կովկասի*

*Հայոց Բարեգործական Ընկերության Շուշիի գրադարան-ընթերցարանի գործունեությանը (*Ստյոպա Պետոյան, *ՀԱԳ, ՊԻ): Հաջորդ զեկուցումները նվիրված էին 1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանում բողոքական միսիոներների որբախնամ գործունեությանը (*Լիլիթ Քոսյան, *ՊԻ), 1914 թ. նոյեմբերից մինչև 1915 թ. սկիզբը հայ գաղթականներին Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության ցուցաբերած օգնությանը (*Ինետա Ադամյան, *ՊԻ), 1915 թ. հայերի ինքնապաշտպանական մարտերի ճնշման և բնակչության ոչնչացման գործում օսմանյան բանակի և զինված այլ կազմավորումների դերակատարությանը (*Աշխեն Բասենցյան, *ՊԻ), հայերի զանգվածային ջարդերի շուրջ 1918 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին Օսմանյան կայսրությունում ծավալված հասարակական քննարկումներին (*Մանե Կոնինյան, *ՊԻ), 1917–1918 թթ. Վրաց եկեղեցու ինքնավարության հաստատմանը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ կապերին (*Ջեննի Թամարյան, Գայանե Ղազարյան, *ՊԻ), Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություններում (1918–1922 թթ.) խոսքի և մամուլի ազատության իրավական կարգավորմանը (*Համո Սուքիասյան, *ՊԻ), 1960–1970-ական թվականներին Խորհրդային Հայաստանի և Արգենտինայի մշակութային կապերին (*Միլվա Գևորգյան, *ՊԻ):*

Այնուհետև Վարդան Եսայանը *(ՊԻ) հաղորդում ներկայացրեց Վարդան Արշակունու առևտրաարդյունաբերական գործունեության,* Տաթև Արարատյանն *(ՀՊՄՀ) ու* Սալվինե Մարկոսյանը *(ԳԿՄԿ)՝ Առաջին աշխարհամարտի տարիներին հայ տարագիրներին փրկելու Ալմա Յոհանսոնի ջանքերի,* Եկատերինա Ռոնան *(ՄՊՀ)՝ XX դարավերջին և XXI դարասկզբին Հայաստանի Հանրապետությունում հայկական Սփյուռքի ներկայացուցիչների իրականացրած կրթական ծրագրերի,* Արմինե Մուրադյանը *(ՊԻ)՝ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծերի վերլուծության վերաբերյալ:*

Զեկուցումների ու հաղորդումների ավարտից հետո տեղի ունեցավ գիտական արդյունավետ բանավեճ, հարց ու պատասխան, իսկ վերջում՝ քննարկում և գիտական նստաշրջանի արդյունքների ամփոփում: Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը, *«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ – պատասխանատու քարտուղար, բ. գ. դ.* Անուշավան Զաքարյանը, *պ. գ. թ.* Հակոբ Մուրադյանը, Գոհար Վարդումյանը, Համո Սուքիասյանը՝ *կատարելով առաջարկներ ու դիտողություններ: Վերջում* Կ. Խաչատրյանն *ամփոփեց նստաշրջանի արդյունքները և տեղեկացրեց, որ լավագույն զեկուցումները կհրատարակվեն ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» պարբերականում:*

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ